

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

“COMBO” ծառայությունների փաթեթի շրջանակում շարժական կապի, ֆիքսված ինտերնետ ծառայության, ֆիքսված հեռախոսակապի և հեռուստատեսության ծառայությունների օգտագործման պայմանների մասին

“ ” 20__թ.

Բաժանորդ _____
/ ԱԱՀ /

Անձը հաստատող փաստաթուղթ _____
/ Անձնագրի սերիա, նույնականացման քարտ /

Հասցե _____
/ Հաշվառման/բնակության վայր /

Բջջային հեռախոսահամար և Պայմանագիր _____
/ Հեռախոսահամար / / BAN /

Բջջային լրացուցիչ հեռախոսահամարներ _____
/ Հեռախոսահամար /

Ֆիքսված հեռախոսահամար և Պայմանագիր _____
/ Հեռախոսահամար / / BAN /

Ֆիքսված Ինտերնետ լոգին և Պայմանագիր _____
/ Հեռախոսահամար / / BAN /

Ծառայությունների փաթեթ

COMBO 4 Regional COMBO 4 Basic COMBO 4 Plus COMBO 4 Max

Տեխնոլոգիա

ADSL VDSL FTTB

Ֆիքսված Ինտերնետի արագություն

10 Մբ/վրկ 15 Մբ/վրկ 50 Մբ/վրկ 100 Մբ/վրկ մաքսիմալ հասանելի

Տրամադրված մոդեմ և ամբողջական զին /ներառյալ ԱԱՀ/

Tenda 301 (15000 դր.) TP-Link 8901N (15000 դր.) ZTE 108N (15000 դր.) F100 (15000 դր.) V100 (28000 դր.)

Տրամադրված TV ընդունիչ և ամբողջական զին /ներառյալ ԱԱՀ/

T100 (40000 դր.) B100 (լրացուցիչ TV ընդունիչ՝ 30000 դր.) B100 (2-րդ լրացուցիչ TV ընդունիչ՝ 30000 դր.)

* Լրացուցիչ TV ընդունիչի ամսական վճարը կազմում է 2500 դր/ամիս COMBO 4 Regional և COMBO 4 Basic փաթեթների, 2000 դր/ամիս COMBO 4 Plus և COMBO 4 Max փաթեթների համար:

Բջջային Ինտերնետի ներառումների սպառումից հետո բջջային Ինտերնետի արագության նվազեցում մինչև 1 կբ/վրկ մինչև հաջորդ ամսվա ներառումների կրկին տրամադրումը

համաձայն եմ հրաժարվում եմ

«Օպերատոր»

«Բաժանորդ»

/ստորագրություն/

/ստորագրություն/

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն, այսուհետ «Օպերատոր» մի կողմից և «Բաժանորդը» մյուս կողմից, երկուսը միասին, այսուհետև՝ «Կողմեր», հաշվի առնելով այն, որ Կողմերի միջև կնքվել է «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ շարժական կապի, Ֆիքսված ինտերնետի, Ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրերը ղեկավարվելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

- Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել շարժական կապի, Ֆիքսված ինտերնետի, ֆիքսված հեռախոսակապի և հեռուստատեսության ծառայությունները համատեղ՝ «COMBO» ծառայությունների փաթեթով, իսկ Բաժանորդը պարտավորվում է մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարել ներկայացված հաշվի վրա նշված ժամկետից ոչ ուշ:
- Սույն Համաձայնագրով նախատեսված ծառայությունների փաթեթից ամբողջությամբ և/կամ դրանում ընդգրկված ծառայություններից որևէ մեկից Բաժանորդի կողմից միակողմանի հրաժարվելու /այսուհետ՝ «հրաժարում»/, ընդգրկված ծառայությունների պայմանագրերով սահմանված պարտավորությունները Բաժանորդի կողմից չկատարելու հիմքով Օպերատորի կողմից դրանք միակողմանի դադարեցնելու, ինչպես նաև Համաձայնագիրը կնքելու պահից սկսած սահմանված կարգով և չափով «COMBO» ծառայությունների փաթեթի համար վճարում չկատարելու դեպքում Բաժանորդը պարտավոր է կատարել վճարումներ հետևյալ կարգով և չափով.
 - Եթե հրաժարումը նախաձեռնվում է Համաձայնագրի կնքման պահից սկսած և/կամ նույն ժամանակահատվածում Հավելվածում նշված հերթական միասնական ամսական վարձը սահմանված ժամկետում չի վճարվում Բաժանորդի կողմից ընդհուպ մինչև սույն համաձայնագրի 4-րդ կետում նշված կարգով «COMBO» ծառայությունների փաթեթի սակագներից օգտվելու հնարավորության դադարեցման պահը՝ ապա Բաժանորդը պարտավոր է այդպիսի հրաժարման պահին և/կամ, համապատասխանաբար՝ վճարման կետանցման ամսաթվից սկսած մինչև 2-րդ ամսվա վերջին օրը ներառյալ միանվագ վճարել առաջին անվճար ամսվա՝ եթե այդպիսին սահմանված է, վարձը, ինչպես նաև տրամադրված սարքավորումների լրիվ արժեքը՝ սարքավորումները ամբողջությամբ չվերադարձնելու կամ պակաս կոմպլեկտայնությամբ (պատկանելիքներ) վերադարձնելու դեպքում:
 - 2.1 Եթե կնքվելու կանոնը տարածվում է նաև «COMBO» ծառայությունների փաթեթում ընդգրկված ծառայությունների պայմանագրերով սահմանված պարտավորությունները Բաժանորդի կողմից չկատարելու հիմքով Օպերատորի նախաձեռնությամբ դրանք միակողմանի դադարեցնելու դեպքերի վրա:
- Բաժանորդի կողմից «COMBO» ծառայությունների փաթեթով սահմանված ամսական բաժանորդային վարձը (այսուհետ՝ «ամսական բաժանորդային վարձ») սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Օպերատորը իրավունք ունի ժամանակավորապես կասեցնել /ընդհատել/ «COMBO» ծառայությունների փաթեթում ներառված ծառայությունները, որից հետո ամսական բաժանորդային վարձը չվճարելու դեպքում ֆիքսված ինտերնետի մատուցման պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում դադարեցնել ֆիքսված ինտերնետի, շարժական կապի, ֆիքսված հեռախոսակապի ծառայության մատուցումը՝ միակողմանի լուծելով ծառայությունների մատուցման պայմանագրերը, որը հանգեցնում է «COMBO» ծառայությունների փաթեթի սակագներից օգտվելու հնարավորության դադարեցմանը:
- «COMBO» ծառայությունների փաթեթից ամբողջությամբ կամ դրա մեջ մտնող շարժական կապի, Ֆիքսված ինտերնետի ծառայության, ֆիքսված հեռախոսակապի կամ հեռուստատեսության ծառայություններից որևէ մեկից Բաժանորդի կողմից միակողմանի հրաժարվելու և/կամ Բաժանորդի կողմից սույն համաձայնագրի, ինչպես նաև շարժական կապի և/կամ ֆիքսված ինտերնետի և/կամ ֆիքսված հեռախոսակապի մատուցման պայմանագրերի պայմանների համաձայն Օպերատորի կողմից դրանք դադարեցնելու դեպքում Բաժանորդի վրա տարածվելու է ֆիքսված ինտերնետի ծառայության մատուցման պայմանագրի 5.9-րդ կետով սահմանված սարքավորումների գինը վճարելու պարտավորությունը:
- Բաժանորդի կողմից սույն համաձայնագրից բխող դրամային պարտավորությունները /ներառյալ 2-րդ կետում նշված պարտավորությունները/ սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ իրավունքի իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում Օպերատորը կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անձնական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը և/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:
- Սույն Համաձայնագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են շարժական և ֆիքսված կապի, ֆիքսված ինտերնետի ծառայությունների մատուցման պայմանագրերով:

Սույն Համաձայնագիրը ստորագրելով՝ հաստատում եմ, որ ծանոթացել եմ և ամբողջությամբ համաձայն եմ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ կողմից շարժական կապի, ֆիքսված Ինտերնետի և ֆիքսված կապի ծառայությունների մատուցման վերը նշված պայմանագրերի պայմաններին, որոնք կցված են սույն Համաձայնագրին և փաթեթում ներառված հեռարձակողի հեռուստատեսության ծառայության մատուցման պայմաններին:

«Օպերատոր»

«Բաժանորդ»

/ստորագրություն/

/ստորագրություն/

Ֆիքսված ինտերնետ ծառայության մատուցման և վերջնակետային սարքավորումն օգտագործման հանձնելու մասին ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն, այսուհետ «Օպերատոր» մի կողմից և «Բաժանորդը» մյուս կողմից, երկուսը միասին, այսուհետև՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկա

- Սույն պայմանագրով Օպերատորը «COMBO» ծառայությունների սակագնային փաթեթի շրջանակում Բաժանորդին մատուցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված ինտերնետ ծառայություն (այսուհետ՝ «Ֆիքսված Ինտերնետ») Օպերատորի կողմից սահմանված սակագներով, որոնք ներկայացվում են Օպերատորի www.beeline.am ինտերնետային կայքում:
- Սույն պայմանագրի կնքման պահին Բաժանորդը օգտագործում է Օպերատորի հանրային էլեկտրոնային հաղորդակցության համակցված ցանցի Պայմանագրում նշված հեռախոսահամարի տակ գործող բաժանորդային գինը ինտերնետ ծառայությունը ստանալու համար և Բաժանորդին տրամադրվում է Պայմանագրում նշված իդենտիֆիկացիոն ժամանակավոր համարը:

- 1.3 Սույն պայմանագրի շրջանակում Բաժանորդին տրամադրվում է “COMBO” ծառայությունների սակագնային փաթեթում ներառված Պայմանագրում նշված արագության ֆիքսված ինտերնետ ծառայությունը: Մինչև 8 մբիթ/վրկ ֆիքսված Ինտերնետ հասանելիության դեպքում հեռուստատեսությունը կարող է ունենալ խափանումներ:
- 1.4 «COMBO» փաթեթի հեռուստալիքները տրամադրվում են “Cross Hi-Tech” ընկերության կողմից, հաստատուն չեն և կարող են փոփոխվել:
- 1.5 Ծառայության արագությունները գործում են բաշխման (SHARED) սկզբունքով:
- 1.6 Եթե սույն պայմանագիրը կնքելու հետ մեկտեղ Բաժանորդին տրամադրվում է վերջնական սարքավորում, ապա Բաժանորդի վրա տարածվում են սույն Պայմանագրի 5-րդ բաժնում նախատեսված “Վերջնական սարքավորումն օգտագործման հանձնելու մասին” պայմանները:

2. Օպերատորի իրավունքներն ու պարտավորությունները

- 2.1 Օպերատորը պարտավոր է բաժանորդի հեռախոսահամարին ծառայությունն ակտիվացնել սույն պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվի առնելով առկա տեխնիկական հնարավորությունները:
- 2.2 Օպերատորը պայմանագրի կնքման օրվանից 15 օրվա ընթացքում իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ծառայության մատուցումը ընդհանրապես կամ Բաժանորդի կողմից ընտրված սակագնային տարբերակի պայմաններով տեխնիկապես հնարավոր չէ:
- 2.3 Օպերատորը իրավունք ունի սահմանել պայմանագրի լուծման ժամանակ վերջնահաշվարկի հատուկ կանոններ՝ Բաժանորդի կողմից պայմանագրի լուծման պահին օգտագործվող սակագնային փաթեթի պայմաններին համապատասխան:

3. Բաժանորդի իրավունքներն ու պարտավորությունները

- 3.1 Բաժանորդը պարտավոր է մատուցված “COMBO Basic” ծառայությունների սակագնային փաթեթի և դրա շրջանակում մատուցված այլ ծառայությունների համար վճարել սույն պայմանագրին կից կնքված Լրացուցիչ համաձայնագրով սահմանված ժամկետում և պայմաններով:
- 3.2 Բաժանորդը պայմանագրի կնքման օրվանից 7 օրվա ընթացքում իրավունք ունի լուծել պայմանագիրը առանց COMBO փաթեթի ծառայությունների ներառումների նկատմամբ պարտավորությունների՝ դիմում ներկայացնելով Օպերատորի սպասարկման գրասենյակ: Օպերատորը կատարում է օգտագործված օրերի դիմաց վերահաշվարկ COMBO ծառայությունների փաթեթի ամսավճարի և փաթեթի ներառումների մասով՝ բացառությամբ ֆիքսված հեռախոսակապի ծառայության: Փաթեթում չներառված ծառայությունների դիմաց ներկայացված հաշիվը Օպերատորի կողմից ենթակա չէ վերահաշվարկի:
- 3.3 Ծառայությունից օգտվելու համար Բաժանորդը կարող է օգտագործել սեփական սարքավորումները, որոնք պետք է համատեղելի լինեն Օպերատորի ցանցի հետ:

4. Ծառայությունների կասեցում և Պայմանագրի լուծման կարգը

- 4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է այնքան ժամանակ մինչև կողմերից մեկը չնախաձեռնի պայմանագրի լուծումը:
- 4.2 Ծառայության դիմաց Բաժանորդի կողմից վճարում չկատարելու դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդին մատուցվող ծառայությունը ժամանակավորապես կասեցվում է: Կասեցման ժամանակահատվածի համար ծառայության գումարը հաշվարկվում է և ենթակա է վճարման:
- 4.3 Մատուցված ծառայությունների համար բաժանորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում ծառայության կասեցման ամսաթվից սկսած 51 օրը ծառայության մատուցումը դադարեցվում է, և պայմանագիրը լուծվում է առանց ծանուցման, իսկ լրացուցիչ հեռախոսաքարտերով ծառայությունները մատուցվում են սակագնային փաթեթին համապատասխան սակագնով: Հիմնական հեռախոսահամարի տրամադրման պայմանագրի խզումը չի ենթադրում լրացուցիչ հեռախոսահամարներով ծառայությունների մատուցման դադարեցում: Լրացուցիչ հեռախոսահամարները անվանափոխության ենթակա չեն “COMBO ” ծառայությունների փաթեթի գործողության ողջ ընթացքում, բացառությամբ, եթե իրականացվում է ամբողջ փաթեթի անվանափոխություն:
- 4.4 Հաշվարկային ամսվա ընթացքում սույն պայմանագրի լուծման դեպքում Բաժանորդը պարտավոր է ընթացիկ ամսվա COMBO ծառայությունների սակագնային փաթեթի համար վճարել Օպերատորի կողմից տրամադրված ծառայության օրերին համապատասխան:
- 4.5 Սույն պայմանագրի գործողությունը դադարեցվում է առանց ծանուցման ADSL և VDSL տեխնոլոգիաներով ֆիքսված ինտերնետ ծառայության մատուցման համար օգտագործվող ֆիքսված հեռախոսագծի ապամոնտաժման պարագայում՝ ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրի լուծման դեպքում:
- 4.6 Սույն պայմանագիրը կարող է լուծվել՝
 - 4.6.1 Բաժանորդի նախաձեռնությամբ՝ այդ մասին Օպերատորին նախօրոք 10 աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով:
 - 4.6.2 Օպերատորի նախաձեռնությամբ՝
 - 4.6.2.1. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում,
 - 4.6.2.2. Տեխնիկական պատճառներով ծառայությունը մատուցելու անհնարինության դեպքում՝ նախօրոք գրավոր ծանուցելու պայմանով, բառառությամբ սույն պայմանագրի 2.2 կետով սահմանված դեպքի:
 - 4.6.2.3. Բաժանորդի բնակության/գտնվելու վայրում տեղադրված ֆիքսված հեռախոսագծի բաժանորդի կողմից ծառայությունն իր բաժանորդային գծի միջոցով ստանալու դիմումը բավարարելու դեպքում:
- 4.7 Բաժանորդի կողմից չվճարման պատճառով կասեցված ծառայությունը մինչև Օպերատորի նախաձեռնությամբ սույն պայմանագրի լուծումը Բաժանորդի կողմից վճարումները կատարելուց հետո վերակտիվացվում է 0 դրամ սակագնով: Պայմանագրի լուծումից հետո Բաժանորդի հեռախոսագծին ծառայությունը ակտիվացվում է ընդհանուր հիմունքներով:

5. Վերջնականային սարքավորումն օգտագործման հանձնելու մասին պայմաններ¹

- 5.1 Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին ժամանակավոր օգտագործման հանձնել Համաձայնագրում նշված սարքավորում(ներ)ը, իսկ Բաժանորդը պարտավորվում է օգտագործել սարքավորումները սույն գլխով սահմանված պայմաններին համապատասխան: Սարքավորումները տրամադրվում են սույն Պայմանագիրը կնքելու պահին Բաժանորդին ծառայությունից օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով:
- 5.2 Սարքավորումները տրամադրվում են սույն Պայմանագրի գործողության ժամկետով:
- 5.3 Սարքավորումների նկատմամբ Օպերատորի սեփականության իրավունքը պահպանվում է Պայմանագրի 5.11 կետով սահմանված ամբողջ ընթացքում, բացառությամբ սույն Պայմանագրի 5.9-րդ կետով սահմանված սարքավորումների ամբողջական գինը Բաժանորդի կողմից վճարելու և սարքավորումների վաճառքի գործարքի փաստով պայմանավորված սարքավորումների հանդեպ սեփականության իրավունքը վերջինին փոխանցվելու դեպքից: Բաժանորդին սարքավորումներ հանձնելու Օպերատորի պարտավորությունը համարվում է կատարված այն Բաժանորդին հանձնելու պահից: Սարքավորումները Բաժանորդին հանձնելու պահից դրա պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը կրում է Բաժանորդը: Սարքավորումները հանձնվում են դրա բոլոր պատկանելիքներով և դրան վերաբերող բոլոր փաստաթղթերով:
- 5.4 Օպերատորը պարտավոր է հանձնել սարքավորումները սարքին վիճակում և պիտանի այն նպատակներին, որոնց համար սովորաբար օգտագործվում է:
- 5.5 Բաժանորդը պարտավոր է պահպանել սարքավորումները սարքին վիճակում, կատարել սարքավորումների անվտանգ շահագործման բոլոր հրահանգները և օգտագործել մոդեմն իր նշանակությանը համապատասխան:

¹ Այս բաժնի պայմանները կիրառվում են միայն այն բաժանորդների նկատմամբ, որոնք սույն Պայմանագիրը կնքելով ձեռք են բերել սարքավորում:

- 5.6 Բաժանորդին իրավունք չունի սարքավորումներն օտարել, տրամադրել վարձակալության/ ենթավարձակալության, գրավ դնել կամ հանձնել այն անհատույց օգտագործման համար:
- 5.7 Բաժանորդը, սարքավորումների թերությունների կ/կամ անսարքությունների հայտնաբերելու դեպքում, պարտավոր է դիմել մատակարարողի սպասարկման կենտրոն և հանձնման-ընդունման ակտով փոխանցել սարքավորումները՝ զննություն կ/կամ փորձաքննություն կատարելու համար: Այն դեպքում, երբ թերությունը առաջացել է ոչ Բաժանորդի մեղքով, Բաժանորդն իրավունք ունի իր հայեցողությամբ Օպերատորից պահանջել ողջամիտ ժամկետներում անհատույց վերացնելու մոդեմի թերությունները կամ սարքավորումները փոխարինել պատշաճ վիճակում գտնվող այլ նմանօրինակ մոդեմով:
- 5.8 Օպերատորն իրավունք ունի հրաժարվել թերի կամ անսարք սարքավորումները փոխարինելուց կամ թերությունները կ/կամ անսարքությունները իր հաշվին վերացնելուց, եթե սարքավորումների զննության կամ փորձաքննության արդյունքում կպարզվի, որ թերությունները կ/կամ անսարքությունները առաջացել են Բաժանորդի մեղքով: Այդ դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել հատուցելու սարքավորումների թերությունները վերացնելու ծախսերը կամ պահանջել վնասների հատուցում սույն Պայմանագրի 5.9 կետում նշված արժեքի չափով:
- 5.9 Սույն Պայմանագրի Բաժանորդի նախաձեռնությամբ ցանկացած պահին լուծելու, ինչպես նաև սույն Պայմանագրի պահանջները խախտելու հետևանքով Օպերատորի կողմից այն լուծելու դեպքերում Բաժանորդը պարտավոր է Օպերատորին վերադարձնել սարքավորումները սարքին վիճակում բոլոր պատկանելիքներով: Սարքավորումները չվերադարձնելու դեպքում Բաժանորդը պարտավոր է վճարել Համաձայնագրում նշված սարքավորումների ամբողջական գինը և սարքավորումները կհամարվի Օպերատորի կողմից Բաժանորդին վաճառված:
- 5.10 Սույն Պայմանագրի 5-րդ բաժնում սահմանված ժամկետում և կարգով սարքավորումները չվերադարձնելու կ/կամ դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ սարքավորումները վերադարձնելու կ/կամ ընդհանուր պարտքի գումարը բռնագանձելու պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագրի կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու դեպքում Ընկերություն կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անհատական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը:

6. Այլ պայմաններ

- 6.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագիրը Օպերատորի կողմից կարող է կնքվել և ստորագրվել կնիքի և ստորագրության ֆաքսիմիլային վերարտադրությամբ:
- 6.2 Սույն պայմանագրի պայմանները միակողմանիորեն կարող են փոփոխվել Օպերատորի նախաձեռնությամբ՝ մեկ ամիս առաջ բաժանորդին գրավոր ծանուցելու միջոցով:
- 6.3 Սույն Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման պայմանները՝ ներառյալ սակագնային տարբերակները (սակագնային փաթեթները), կարող են փոփոխվել Օպերատորի հրապարակային օֆերտան Բաժանորդի կողմից ցանկացած եղանակով ակցեպտավորելու միջոցով:
- 6.4 Ծառայության մատուցման լրացուցիչ կ/կամ հատուկ պայմանները, ներառյալ բայց չսահմանափակված առանձին սակագների, սակագնային փաթեթների և Օպերատորի կողմից առաջարկվող կոմերցիոն այլ առաջարկների պայմաններով, հրապարակվում են Օպերատորի պաշտոնական www.beeline.am կայքում:
- 6.5 Ֆիքսված ինտերնետ ծառայությունը Բաժանորդին է մատուցվում վերջնական օգտագործման համար և նախատեսված չէ Բաժանորդի կողմից այն երրորդ անձանց առաջարկելու/վերավաճառելու համար:
- 6.6 Բաժանորդի կողմից սույն պայմանագրից առաջացած դրամային պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ իրավունքը իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագրի կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում Օպերատորը կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անձնական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը կ/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:

7. Բաժանորդի տեղեկությունների գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը

- 7.1 Օպերատորը պարտավորվում է ձեռնարկել բոլոր միջոցները սույն պայմանագրի շրջանակում Բաժանորդի կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Օպերատորը իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
- 7.2 Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու նպատակով Օպերատորի կողմից իր անձնական տվյալները մշակելու, օգտագործելու, ինչպես նաև դրանք և սույն պայմանագրի 7.1 կետում նշված տվյալները երրորդ անձանց /ներառյալ՝ այլ երկրներ/ փոխանցելու վերաբերյալ: Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը հավաստում է, որ Օպերատորի կողմից ծանուցված է Բաժանորդի անձնական տվյալները մշակելու Օպերատորի մտադրության, մշակման իրավական հիմքերի, նպատակի ինչպես նաև՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:
- 7.3 Սույն Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տեղեկացվում է, որ Օպերատորը կարող է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով վարկային բյուրոներին տրամադրել Բաժանորդի կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկություններ: Օպերատորը պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված տեղեկությունների բացահայտման հետևանքով պատճառված որևէ վնասի իրավական հետևանքի համար:
- 7.4 Սույնով բաժանորդը համաձայնվում է, որ իր հեռախոսահամարը կարող է օգտագործվել մարքեթինգային նպատակով նաև երրորդ անձանց կողմից, որը կարող է արտահայտվել գովազդային բնույթի կարճ SMS հաղորդագրությունների/զանգերի ստացման, սոցիալական հարցումների, համացանցում, սոցիալական ցանցերում գովազդի ցուցադրման ձևով և այլն: Օպերատորը պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված հաղորդագրությունների իրավական հետևանքների համար:
- 7.5 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
- 7.6 Սույն պայմանագիրը կնքված է երկու հավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ: Հաստատում եմ, որ սույն Պայմանագրով ծառայությունից բացի ձեռք եմ բերել նաև Պայմանագրում նշված սարքավորում(ներ)ը:

«Օպերատոր»

«Բաժանորդ»

“Տելեկոմ Արմենիա” ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հեռահաղորդակցության օպերատոր “Տելեկոմ Արմենիա” փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 լիցենզիայի, այսուհետ՝ “Օպերատոր” մի կողմից և մյուս կողմից “Բաժանորդը” կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկա

“Օպերատորը” պարտավորվում է ամրակցված հեռախոսային ցանցի իր “Բաժանորդին” հատկացված հեռախոսագծով (հեռախոսագծերով) (ըստ հավելվածի՝ հեռախոսի համար, կապուղիներ, միացնող գիծ, ուղիղ գիծ, ISDN ցանցային տերմինալ՝ NETMOD սարքավորում, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալ, անտենա և այլ կապի միջոցներ) մատուցել հեռախոսակապի ծառայություններ՝ ըստ Բաժանորդի կողմից ընտրած տարիֆային պլանի իսկ “Բաժանորդը” պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել մատուցված հեռախոսային ծառայությունների համար:

2. Վճարման կարգը և ժամկետները

- 2.1 Բաժանորդին հեռախոսակապի ծառայությունները մատուցվում են սահմանված կարգով հաստատված սակագներով՝ համաձայն Բաժանորդի կողմից ընտրած սակագնային փաթեթի
- 2.2 “Բաժանորդը” մատուցված հեռախոսակապի ծառայությունների հաշիվները կարող է ստանալ Օպերատորի սպասարկման կետերում և/կամ էլեկտրոնային փոստով՝ հաշվետու ամսվան հաջորդող մինչև ամսի 10-ը: Վճարման ենթակա գումարի մասին տեղեկատվություն Բաժանորդը կարող է ստանալ այդ նպատակով առանձնացված հեռախոսահամարով: Հետագայում, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում բաժանորդին հաշիվները կարող են տրամադրվել նաև այլ եղանակներով:
- 2.3 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ըստ հաշվի(ների), “Օպերատոր” գործառնական դրամարկներում, Հայփոստի, և ՀՀ բանկերի բաժանմունքներում (որոնց հետ կնքված են պայմանագրեր), կանխիկ վճարումներ ընդունող տերմինալներում կամ այլ վճարման միջոցներով, ինչպես նաև “Օպերատոր” հաշվարկային հաշվին վճարումներ կատարելու միջոցով:
- 2.4 “Օպերատորի” կողմից մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները “Բաժանորդը” պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ:
- 2.5 Մատուցված ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա: Նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են Բաժանորդին մատուցվող Ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց:

3. “Օպերատորի” պարտականությունները և իրավունքները

3.1 “Օպերատոր” պարտավոր է՝

- 3.1.1 Ելնելով գործող տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ապահովել կայուն և անխափան հեռախոսակապի ծառայություններ:
- 3.1.2 Իր ցանցի սահմաններում ապահովել հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:
- 3.1.3 Սեփական նախաձեռնությամբ կամ “Բաժանորդի” հայտով վերացնել առաջացած կայանային և գծակաբեկային վնասվածքները Հեռախոսակապի ծառայությունների մատուցման Կանոններով էջ 2 սահմանված ժամկետներում:
- 3.1.4 Ոչ “Բաժանորդի” մեղքով հեռախոսագծերի վնասվածքների, հեռախոսացանցներում տեղի ունեցած վթարների դեպքերում ամրագրել խափանման օրը, ժամը և այն վերականգնել Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում:
- 3.1.5 Ապահովել ՀՕԿՀ կողմից կարգավորման ենթակա հեռախոսակապի ծառայությունների սակագների բարձրացման մասին հրապարակային տեղեկատվությունը Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում, իսկ այդ սակագների նվազեցման մասին՝ ոչ ուշ, քան այն կիրառելու օրվանից 3 (երեք) օր առաջ:

3.2 “Օպերատորը” իրավունք ունի՝

- 3.2.1 Անջատել Բաժանորդային հեռախոսագիծը (գծերը), հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ Օպերատորի կողմից մատուցվող հեռախոսակապի ծառայություններից ցանկացածի դիմաց վճարումները չկատարելու կամ սույն պայմանագրի պայմանները խախտելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունների առկա պարտքերի մարման դեպքում անջատված հեռախոսագծերը ենթակա են անվճար վերամիացման:
- 3.2.2 Հանել սույն պայմանագրի 3.2.1 կետով սահմանված ժամկետում անջատված հեռախոսագծերը՝ հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերը չվճարելու դեպքում և դադարեցնել պայմանագրի գործողությունը՝ հանման օրվանից սկսած 3 (երեք) ամսվա ընթացքում պահպանելով տեխնիկական տվյալները և վերականգնման հնարավորությունը:
- 3.2.3 Հեռախոսահամարի համարն օրվանից 3 (երեք) ամսվա ընթացքում, “Բաժանորդի” կողմից պարտքերը չմարելու և վերականգնման միանվագ ծառայության վարձը չմուծելու դեպքում, հեռախոսակապի ծառայությունների մատուցումը (նոր տեղադրում) իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ հեռախոսակապի ծառայությունների դիմաց նախկին պարտքերը մարելու պայմանով
- 3.2.4 Մինչև պայմանագրի դադարեցումը հաշվարկել և գանձել բաժանորդային վարձը:
- 3.2.5 Անմիջապես անջատել բաժանորդային հեռախոսահամարը (գծերը) և լուծել սույն պայմանագիրը, եթե
 - “Բաժանորդին” տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց լիազորված մարմնի լիցենզիայի և առանց “Օպերատորի” հետ նախնական գրավոր համաձայնեցման օգտագործվում է շահույթ ստանալու նպատակով կամ
 - “Բաժանորդին” տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց “Օպերատորի” հետ նախնական գրավոր համաձայնեցման տրամադրվել են այլ անձի
 - “Բաժանորդը” հանրային հեռախոսացանցին է միացրել չտերմինալի կապված վերջնակետային սարքավորում կամ այնպիսի վերջնակետային սարքավորում, որը համատեղելի չէ կամ միջամտում է հանրային հեռախոսացանցի աշխատանքին կամ հեռախոսակապի ծառայություններից օգտվելու՝ ուրիշների հնարավորությանը:
 - “Օպերատորի” քննարկմանն է ներկայացվել սույն պայմանագրով հեռախոսաֆիկացված տարածքի հանդեպ իրավունքներ ունեցող անձի հայտը՝ այդ տարածքում հեռախոսային գիծ տեղադրելու վերաբերյալ, եթե “Բաժանորդին” այդ իրավունքները չեն պատկանում

4. “Բաժանորդի” պարտականությունները և իրավունքները

4.1 “Բաժանորդը” պարտավոր է՝

- 4.1.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար վճարումները կատարել լրիվ ծավալով, յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:
- 4.1.2 “Օպերատորին” տեղեկացնել բաժանորդային սարքավորման տեսակի (ձևի) մասին և դրանք պահպանել սարքին վիճակում:
- 4.1.3 Կապի որոշ ծառայություններից (VAS) օգտվելու դեպքում ծառայությունների օգտագործման հատուկ պայմանների մասին Բաժանորդը կարող է տեղեկացվել կապը սկսվելու պահին: Կապի շարունակելուն ուղղված Բաժանորդի հետագա գործողությունները համարվում են տվյալ պայմաններն ընդունելու՝ վերջինիս անվերապահ համաձայնություն: Ծառայությունների մատուցման պայմանների հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը պետք է դադարեցնի կապը:

4.1.4 Պայմանագրում նշված հեռախոսաֆիկացված տարածքի նկատմամբ իրավունք ունեցող անձի (քաղաքացի կամ կազմակերպություն) փոփոխության, կամ բաժանորդի անվան, անձնագրային տվյալների, բնակության, գտնվելու վայրի և այլ փոփոխությունների դեպքերում գրավոր տեղյակ պահել “Օպերատորին” նման փոփոխությունները ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30-օրյա ժամկետում՝ պայմանագիրը վերաձևակերպելու համար: Բաժանորդ-իրավաբանական անձը պարտավորվում է տեղեկացնել Օպերատորին՝ իր հանդեպ անվճարունակության վարույթ հարուցելու կամ իրավաբանական անձի կամավոր լուծարման մասին որոշում կայացնելու վերաբերյալ՝ նշված իրադարձության մասին հայտնի դառնալու օրվանից սկսած՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

4.1.5 Վճարել մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար նաև այն դեպքում, երբ բաժանորդային (վերջնային) սարքավորումը օգտագործվել է այլ անձանց կողմից, անկախ այն բանից համաձայնեցվել է “Բաժանորդի” հետ, թե ոչ:

